Հավելված
Հաստատված է Հայաստանի
Հանրապետության էներգետիկայի
կարգավորող հանձնաժողովի 2002 թվականի
հոկտեմբերի 2-ի N 64Ն որոշմամբ

ԿԱՐԳ

Լիցենզավորված անձանց կողմից ՀՀ էներգետիկայի կարգավորող հանձնաժողով ներկայացվող զարգացման ներդրումային ծրագրերի համաձայնեցման

Սույն կարգը «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի ը) ենթակետի համաձայն սահմանում է լիցենզավորված անձի կողմից ներկայացվող զարգացման ներդրումային ծրագիրը՝ ՀՀ էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի հետ համաձայնեցման ընթացակարգը:

1.Կարգում օգտագործված հիմնական հասկացությունները

Սույն կարգում օգտագործված հիմնական հասկացությունները սահմանվում են հետևյալ կերպ.

Լիցենզավորված անձ՝ ՀՀ էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի կողմից գործունեության լիցենզիա ստացած և էներգետիկայի բնագավառում լիցենզիայի պայմաններին համապատասխան գործունեություն իրականացնող իրավաբանական անձ.

Հանձնաժողով՝ Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողով.

Որոշում՝ Հանձնաժողովի կողմից «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքով իրեն վերապահված իրավասությունների սահմաններում ընդունված իրավական ակտ:

Ծրագիր՝ Հանձնաժողով ներկայացվող զարգացման ներդրումային ծրագիր:

Ներդրումներ՝ Սույն կարգի իմաստով ներդրումներ են համարվում այն ֆինանսական ծախսերը, որոնք ուղղված են ընկերության լիցենզավորված գործունեության համար անհրաժեշտ օգտակար և օգտագործվող ակտիվների ավելացմանը:

2. Ընդհանուր դրույթներ

2.1 Լիցենզավորված անձի կողմից Հանձնաժողով ներկայացված Ծրագիրը պետք է նպատակաուղղված լինի հետևյալ հիմնական խնդիրներից որևէ մեկի կամ մի քանիսի լուծմանը.

- մաշված և դուրս գրված ակտիվների նորով փոխարինում,
- ժամանակակից էներգաարդյունավետ և էներգախնայող տեխնոլոգիաների կիրառում,
- տեղական էներգետիկական պաշարների, էներգիայի այլընտրանքային աղբյուրների արդյունավետ օգտագործում,
- էներգիայի մատակարարման և ծառայությունների մատուցման որակի համապատասխանեցում սահմանված նորմերին,
- էներգետիկայի բնագավառի անվտանգության և հուսալիության մակարդակի բարձրացում,
- արտադրական հզորության ավելացում,
- շրջակա միջավայրի պահպանության ապահովում,
- կյանքի ու գույքի՝ տեխնիկական կանոնակարգերով սահմանված նորմերի կատարման ապահովում,
- տեխնոլոգիական ու առևտրային կորուստների իջեցման տնտեսապես հիմնավորված միջոցառումներ,
- ՀՀ էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի և իրավասու այլ մարմինների նորմատիվ ակտերի կատարում,
- բեռի աճով և/կամ նոր սպառողների էներգամատակարարման պահանջով պայմանավորված ցանցերի ընդլայնում և թողունակության մեծացում,
- գործունեության արդյունավետության բարձրացման այլ միջոցառումներ:

2.2 Ծրագիրը պետք է Հանձնաժողով ներկայացվի համապատասխան տեխնիկատնտեսական հիմնավորումներով (նախագիծ, նախահաշիվ, նախագծի տեխնիկական և բնապահպանական փորձաքննության եզրակացությունները, ծրագրի իրականացման ժամկետները, ծրագիրն իրականացնելու համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների մեծությունը, աղբյուրները և այլն), ինչպես նաև Լիցենզավորված անձի սակագների

(մատուցվող ծառայության արժեք) վրա Ծրագրի հնարավոր ազդեցության չափը:

2.3 Լիցենզավորված անձը, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, պատասխանատվություն է կրում Հանձնաժողով ներկայացրած տեղեկատվության հավաստիության համար:

2.4 Լիցենզավորված անձի Ծրագրում ներկայացված տեղեկատվության գաղտնիության հարցը կարգավորվում է «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով:

3. Ծրագրի ուսումնասիրումը հանձնաժողովում

3.1 Լիցենզավորված անձը Ծրագիրը Հանձնաժողովի հետ համաձայնեցնելու համար այն մուտքագրում է Հանձնաժողովում՝ կից գրության հետ միասին: Հանձնաժողովի համապատասխան ստորաբաժանումը ստուգում է ներկայացված ծրագրի համապատասխանությունը 2.1, 2.2 կետերի պահանջներին:

3.2 Ծրագիրը չի ընդունվում ուսումնասիրության, եթե՝

ա) նրանում ընդգրկված փաստաթղթերը չեն համապատասխանում ՀՀ օրենսդրությամբ, այլ իրավական ակտերով և սույն կարգով սահմանված պահանջներին,

բ) ներկայացված փաստաթղթերում և տեղեկություններում առկա են անճշտություններ և անհամապատասխանություններ:

3.3 Հանձնաժողովը, Ծրագրի ստուգման արդյունքների մասին (ընդունում է ուսումնասիրության կամ չի ընդունում), գրավոր տեղեկացնում է Լիցենզավորված անձին՝ Ծրագիրը ստանալու օրվանից ոչ ուշ, քան 10 օրվա ընթացքում: Անկախ ստուգման արդյունքից Ծրագիրը Լիցենզավորված անձին չի վերադարձվում և պահպանվում է Հանձնաժողովում:

3.4 Լիցենզավորված անձը, Հանձնաժողովի կողմից Ծրագրի ստուգման արդյունքում հայտնաբերված թերությունները վերացնելուց և (կամ) բացակայող փաստաթղթերը լրացնելուց հետո կարող է այն կրկին ներկայացնել

Հանձնաժողովի քննարկմանը՝ սույն կարգով սահմանված պահանջներին համապատասխան:

3.5 Ստուգման դրական արդյունքի դեպքում Հանձնաժողովն սկսում է Ծրագրի ուսումնասիրման գործընթացը և կայացնում համապատասխան Որոշում՝ Ծրագրի ստուգման արդյունքների մասին գրավոր տեղեկացնելու օրվանից հետո՝ 50 օրվա ընթացքում:

3.6 Հանձնաժողովն իրավունք ունի Լիցենզավորված անձից պահանջել նաև լրացուցիչ տեղեկատվություն և փաստաթղթեր, որոնց ներկայացման անհրաժեշտության մասին գրավոր տեղեկացնում է Լիցենզավորված անձին:

3.7 Ծրագիրը մերժվում է, եթե՝

- նրանում բերված տեղեկատվությունը չի համապատասխանում իրականությանը,
- ներկայացված Ծրագիրը նպատակաուղղված չէ 2.1 կետով նախատեսված խնդիրներից որևէ մեկի կամ մի քանիսի լուծմանը,
- առաջարկված լուծումները չեն համապատասխանում ՀՀ-ում գործող տեխնիկական կանոնակարգերին և նորմերին:

3.8 Ծրագիրը կարող է մերժվել, եթե այն հանգեցնում է սպառողների սակագների բարձրացմանը:

3.9 Ներկայացված Ծրագրի վերաբերյալ Հանձնաժողովի դրական եզրակացության և Ծրագրով նախատեսված ներդրումները սակագներում ներառելու կամ Ծրագիրը մերժելու վերաբերյալ Որոշման պատճենը 5 աշխատանքային օրվա ընթացքում ուղարկվում է Լիցենզավորված անձին:

3.10 Ներկայացված Ծրագրի մերժման դեպքում Լիցենզավորված անձը կարող է շտկել մերժման պատճառ հանդիսացող թերությունները, լրամշակել Ծրագիրը և կրկին համաձայնություն ստանալու համար դիմել Հանձնաժողով:

3.11 Հանձնաժողովի հետ համաձայնեցված Ծրագրով կատարված փաստացի ներդրումները ներառվում են Լիցենզավորված անձի սակագներում՝ Լիցենզավորված անձի կողմից Ծրագրով սահմանված ժամկետներում ներդրումները կատարելուց և դրանց կատարումը հավաստող փաստաթղթերը Հանձնաժողով ներկայացնելուց հետո: Նշված փաստաթղթերը ներկայացվում

են Հանձնաժողովի կողմից հաստատած «Սակագների սահմանման (վերանայման) կարգով» սահմանված հայտի հետ միասին:

3.12 Կատարված ներդրումների մեջ հաշվի չեն առնվում.

- նախագծա-նախահաշվային փաստաթղթերում չնախատեսված աշխատանքների արժեքները,
- փաստաթղթերով չհիմնավորված ծախսերը,
- նախագծա-նախահաշվային փաստաթղթերի համաձայն օգտագործված նյութերի և սարքավորումների շուկայական գները գերազանցող մասը:

3.13 Ծրագրի նախագծում նախատեսված աշխատանքների ծավալների գերազանցման դեպքում լրացուցիչ ծախսերը հաշվի կառնվեն միայն այն դեպքում, երբ դրանց հիմնավորող նախագծային փոփոխությունները նախապես համաձայնեցված են Հանձնաժողովի հետ:

3.14 Եթե ներդրումների կատարման արդյունքում Լիցենզավորված անձը չի կարողանում հասնել Ծրագրում նախատեսված ցուցանիշներին, ապա Հանձնաժողովը կատարված ներդրումները սակագնի հաշվարկում հաշվի է առնում ստացված արդյունքներին համամասնորեն: